

## ԿԱՐԵՆ ՎՅԱԶԵՍԼԱՎԻ ԱՍՐՅԱՆ

### «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավար

Ծնվել է 1983թ.-ի մայիսի 6-ին՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում:

2003թ.-ին ավարտել է Արցախի պետական համալսարանը՝ Տեսական տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ բակալավրի որակավորմամբ:

2005թ.-ին ավարտել է Արցախի պետական համալսարանը՝ Տնտեսական քաղաքականություն և կառավարում մասնագիտությամբ՝ մագիստրոսի որակավորմամբ:

2003թ.-ի հուլիսի 21-ին աշխատանքի է ընդունվել «Արցախբանկ» ՓԲԸ-ում և մինչև 2005թ.-ի մայիսը աշխատել է որպես «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի, վերահսկողության և վերլուծության գլխավոր դեպարտամենտի տարածքային ստորաբաժանումների վերահսկման բաժնի մասնագետ: 2005թ.-ի մայիսից մինչև 2006թ.-ի մայիսը զբաղեցրել է նույն բաժնի I կարգի մասնագետի պաշտոնը: 2006թ.-ի մայիսից մինչև 2010թ.-ի հունիսը զբաղեցրել է «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի անդամի պաշտոնը: 2010թ.-ի հունիսից մինչև 2017թ.-ի նոյեմբերի 16-ը զբաղեցրել է «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

2017թ.-ի նոյեմբերի 16-ից «Արցախբանկ» ՓԲԸ Խորհրդի որոշմամբ նշանակվել է «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավար:

Ամուսնացած է: